

Թած է Ղրիմ եւ հոն Ս. Սարգիսի եկեղեցւոյն այս դուռը մեկենասած «Պժե(1366) ՄԱՐՏԻ ԻԸ(28)»ին: Եթէ մեր ենթադրութիւնը ճիշդ է, ուրեմն այն ատեն լուծուած կ'ըլլայ Դսեղի Մամիկոնեանց Տան վերջաւորութեան գաղտնիքը, եւ այդ գերզատանին անհետացումը Ղրիմի մէջ փնտռելու է եւ ոչ թէ Դսեղի:

Թիւ 30 նկարը ուշադիր դիտող ընթերցողը պիտի նկատէ որ աջ փեղկին ստորին մասը դժածեւերով կը տարբերի նոյն փեղկին վրայ երեւցող գլխաւոր մասէն: Դրան այս անճահ ու կոպիտ ամբողջացումը կատարուած է ի դին մեր Մամիկոն Մամիկոնեանի ենթադրած 1366 թուականով փայտափորագրեալ դրան, որուն մասերը ստուերին մէջ ձախ փեղկին, ինչպէս նաեւ աջ փեղկին ձախ մասին մէջ, որոչ կ'երեւին: Յաւալի կը դռնեմ 1366ի դրան այս յօշոտումը ի հաշիւ Թորոսի դրան, առանց սակայն որեւէ օգուտ բերելու:

Տեսնո՞ք որ Հայր Բժշկեանց կը խօսի նոյնպէս խաչագարդ փորագրեալ Ս. Սարգիսի երկրորդ փայտափորագրեալ դրան մը մասին եւ կու տայ ատոր յիշատակարանը ստպէս. ԱՐԴԵԱՄԲԲ ԿԻՐ ԱԼԷՔՍԻՆ ՅԻՇԱՏԱԿ ԻԻՐ ԵՒ ԾՆՈՂԱՅ ԻԻՐՈՅ: Միւս փեղկին՝ ԱՁՍ ԴՐԱՆ ՍՐԲՈՅ ՍԱՐԳՍԻ ՁԱԻՐԱՎԱՐԻՆ...: Մեզի չի տրուիր թուականը եւ յիշատակարանէն դատելով մենք գայն ամբողջական չենք գտներ: Կիր Ալէքս, եթէ եւրոպէս այդպէս կը կարգացուի անունը, անշուշտ պէտք չէ շփոթել Տրապիզոնի համանուն կայսեր հետ: Կիր Ալէքսը այս արձանագրութեան մէջ մեկենասին անունն է:

Հայր Բժշկեանց կը վկայէ նաեւ որ Ս. Սարգիսի երրորդ դուռը փոխադրուած էր Կաֆայի Ս. Հրեշտակապետ եկեղեցին: Արդարեւ երբ ան կու տայ այս եկեղեցւոյն նրկարագրութիւնը, կը հաստատէ ատիկա բնութիւնը. «Բնիւղի դուռն տաճարիս է քանդակեալ խաչագարդ եւ ծաղկազարդ, երկայն 9 թղաչափ, եւ յայն 3, երկփեղկեայ ի միում փեղկի գոյ յիշատակագիր է ՅԻՇԱՏԱԿ ՎԱՍՆ ԱՄԵՆԻ, Ի ՅՈՒԹ ՀԱՐԻԻՐ ԵՒ Ի(20) ԹՎԻ ԳՈՐԾԵԱԼ ԶԵՌԱՄԲԲ ԾՆՈՑՈՐ ՇԱՀԻ. եւ միւս փեղկի. ԿԱՏԱՐԵՅԱԻ ԴՈՒՌՍ ՏԱՃԱՐԻ, ՍՐԲՈՅ ՍԱՐԳՍԻ ՁԱԻՐԱՎԱՐԻ, ԱՐԴԱՐ ԱՐԴԵԱՄԲԲ ԺՈՂՈՒ

ՎՐԴԻ: Չայս դուռն, որպէս սասցաք, ի միւս տաճարէ աստ փոխադրեալ են նորոգութեամբ իմն, ըստ որում ցուցանէ կողմնական գրուածն սակա նորոգութեան» (էջ 351): Դժբախտաբար ան մեզի չէ տուած «կողմնական գրուածն սակա նորոգութեան», որ դուրսէ հետաքրքրական ծանոթութեան պատառիկ մը ունենար իր մէջ: Այս դրան ալ նկարը հրատարակուած կը գտնենք Վ. Միքայէլեանի վերոյիշեալ գիրքին մէջ, թէեւ դարձեալ որեւէ տեղեկութիւն չի տար թէ այդ դուռը ո՞ր կը պահուի այժմ (Իցիւ թէ Հայաստանի թանգարանը կարելի ըլլար փոխադրել այս ազգապատկան եւ եկեղեցապատկան նշխարը): Կատարեալ փեճակի մը մէջ երեւցող այս դրան նկարը կ'արտատպենք հոս յիշեալ գիրքէն իբր նկար թիւ 31: Հոնկէ խի կարելի է անսխալ եւ ամբողջապէս կարգալի գեղեցիկ եւ ճարտարօրէն փորագրուած երեք տողեան յիշատակարանը: Ատիկա կը կատարենք, թէեւ բացի մէկ կարեւոր ընթերցումէ՝ Հայր Բժշկեանցի ընթերցումը ամբողջական կ'երեւի: Ահաւասիկ լուսանկարին վրայէն մեր ընթերցումը:

Չախ փեղկ.

ԿԱՁՄԵՅԱԻ ԴՈՒՌՍ ՏԱՃԱՐԻ  
ՍՐԲՈՅ ՍԱՐԳՍԻ ՁԱԻՐԱՎԱՐԻ  
ԱՐԴԱՐ ԱՐԴԵԱՄԲԲ ԺՈՂՈՎՐԴԻ

Աջ փեղկ:

Ի ՅԻՇԱՏԱԿ ՎԱՍՆ ԱՄԵՆԻ  
Ի ՅՈՒԹ ՀԱՐԻԻՐ ԵՒ Ի ԹՎԻՆ  
ԳՈՐԾԵ ԶԵՌԱՄԲ ԾՆՈՑՈՐ ՇԱՀԻ(5)

«Յութհարիւր եւ Ի», այսինքն 820 Հայր թուականն է, որ հաւասար է Քրիստոսի 1371ին: Յիշատակարանը բարբախտաբար մեզի կու տայ նաեւ դրան փայտափորագրող վարպետը՝ ԾՆՈՑՈՐ ՇԱՀ: Բնական է չենք կրնար ըսել որ Ծնոֆորչահ եղած ըլլայ նաեւ նոյն Ս. Սարգիս եկեղեցւոյն միւս դուռերուն փայտափորագրիչը: Իրաւ է ա-

(5) Այս դրան նկարին մէջ դրան երկու փեղկերուն ուղղահայեաց ներքին գտնիները կազմուած կ'երեւին երկարագիր տառածեւերէ (հայերէն), որոնք դժբախտաբար կարելի չէ ինձի կարգալ: Հայր Բժշկեանց ալ չէ կարգացրեր: